Հաստատում եմ՝
«Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր,
տեխն.գ.դ., պրոֆեսոր ՌԱՖ. Սահակյան
«12» 2025թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Հռիփսիմե Կարապետի Մարոնյանի «ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԶԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ» խորագրով ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (կերպարվեստ)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հռիփսիմե Կարապետի Մարոնյանի «Հագուստի մոդելավորման դասավանդման հիմունքները ազգային տարազի համատեքստում» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի «Մանկավարժության և հոգեբանության» և «Արվեստի և սպորտի» ամբիոնների համատեղ նիստում (Արձ. թիվ 15 կայացած՝ 11.03.2025թ.):

Մասնակցում էին «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի մ.գ.դ., պրոֆեսոր Պ.Գևորգյանը, ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ, Լ.Բաղդասարյանը, դոցենտներ՝ Ք.Վիրաբյանը, Լ.Մարուքյանը, ավագ դասախոս՝ մ.գ.թ. Գ.Էմինյանը, հ.գ.թ. դոցենտներ՝ Ն.Կոստանդյանը, Մ.Մազմանյանը, Մ.Շահվերդյանը, ավագ դասախոս՝ մ.գ.թ., դոցենտ Ա.Ստեփանյանը, դասախոսներ՝ Ն.Հովսեփյանը, Տ.Մալումյանը, Մ.Միքայելյանը:

«Արվեստի և սպորտի» ամբիոնի մ.գ.դ., պրոֆեսոր Վ.Ղարագյոզյանը, պրոֆեսոր Ս.Հարությունյանը, ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ Ա.Բարսեղյանը, դոցենտներ Հ. Սարգսյանը, Զ.Էվոյանը, Ա.Հովհաննիսյանը, Հ.Հակոբյանը, Ռ.Ամիրբեկյանը, Ռ.

Հեքիմյանը, Թ.Մելիքյանը, Հ.Չատինյանը, ավագ դասախոս Վ.Շահբազյանը, դասախոսներ Ս.Վեքիլյանը, Գ.Մինասյանը, Մ.Սիրադեղյանը, Մ.Մկրտչյանը, Ս.Փոթինյանը:

Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 121 էջ: Այն բաղկացած է ներածությունից, 2 գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և 2 հավելվածից:

Ներածությունում սահմանված են օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, վարկածը, հետազոտության մեթոդները, գիտական նորույթը, ինչպես նաև տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին՝ ««Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի տեսական-մեթոդաբանական հիմքերը ԲՈՒՀ-ում» խորագրով գլուխը բաղկացած է 3 ենթագլխից, որտեղ ատենախոսը ներկայացրել է «Հագուստի մոդելավորում» դասընթացի գիտատեսական հիմնավորումը, անդրադարձել է անհատի գեղարվեստական կրթության հարցերին ազգային տարազի ուսումնասիրման համատեքստում ու պարզաբանել հայկական տարազի ազգային բնույթը:

Ատենախոսության երկրորդ՝ ««Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի ուսուցման ժամանակակից տեխնոլոգիան ազգային տարազի ուսումնասիրման համատեքստում» խորագրով գլուխը բաղկացած է 3 ենթագլխից, որոնք վերնագրված են հետևյալ կերպ՝ ««Հագուստի մոդելավորում» դասընթացի հիմնադրույթը ինտեգրման գործառույթում», ««Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի մեթոդիկան և տեխնոլոգիան», «Փորձարարական ուսուցման ընթացքը և արդյունքները»:

Հեղինակը փորձագիտական աշխատանքների հիման վրա հավաստում է, որ ազգային տարազի ուսումնասիրումը հիմք կարող է հանդիսանալ բացահայտելու սովորողների հայրենագիտական, մասնագիտական և գեղարվեստագեղագիտական ունակությունները հագուստի մոդելավորման համալիր դասընթացի շրջանակում:

Գիտափորձն անցկացվել է 2018-2024թթ. ՀՊՄՀ-ի Գեղարվեստական կրթության ֆակուլտետում, որի վերլուծության շնորհիվ անհրաժեշտություն է առաջացել մշակելու «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթաց, որը ներկայացված է հավելվածում:

Աշխատանքի 2-րդ գլխի 3-րդ ենթագլուխը ավարտվում է «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի նոր փորձարարական մոդելի ներկայացմամբ:

Հետազոտության վերաբերյալ հեղինակը հրատարակել է 6 հոդված:

Վերլուծելով Հռիփսիմե Մարոնյանի ատենախոսական աշխատանքը՝ հարկ ենք համարում նշել հետազոտության արժեքավոր կողմերը.

- հեղինակը կարևորել է հայկական կիրառական արվեստը՝ որպես գեղագիտական դաստիարակության գործոն,
- արժևորել է ուսանողների մոտ գեղարվեստական կրթության, ճաշակի, ազգային մշակույթի ձևավորումը,
- ներկայացրել է ազգային տարազի գիտատեսաբանական հիմքերի հետազոտությունը:

Արժևորելով ատենախոսի կողմից կատարած գիտական աշխատանքը՝ հարկ ենք համարում ներկայացնել մի շարք նկատառումներ.

1. աշխատանքի բովանդակության մեջ ներկայացված էջերի և ատենախոսության էջերի մեջ կա անհամապատասխանություն /սկսած էջ 21-ից/,
2. վերաձևակերպման կարիք ունեն հետազոտության նպատակը, խնդիրներից 5-րդը,
3. հետազոտության գիտական նորույթներից՝ «մշակվել է «Հագուստի մոդելավորում» համալիր ինտեգրված դասընթացի հիմնադրույթը» և «կազմվել է գեղարվեստատեխնոլոգիական ուղղվածության համալիր ծրագիր հագեցված ձևատեսական համապատասխան բովանդակային ցուցումներով» աշխատանքի բովանդակության մեջ հստակ և համակարգված չեն արտահայտվում,
4. պաշտպանության ներկայացվող 3-րդ դրույթը սխալ է ձևակերպված /էջ 8/,
5. անհասկանալի են աղյուսակ 2, 3, 4-ի տվյալների ստացման ուղիները,
6. գծապատկեր 1-ի 3-րդ սյունակը կարծում ենք պետք է լինի «ուսուցման ավարտ», ոչ թե «ուսուցման ընթացք» /էջ 103/,
7. եզրակացություններից 2-րդ, 3-րդ, 6-րդը պնդումներ չեն,
8. աշխատանքում առկա են բազմաթիվ տեխնիկական վրիպումներ:

Եզրակացություն

Հետազոտության թեմայի արդիականությունը, գործնական նշանակությունը թույլ են տալիս եզրակացնել, որ Հռիփսիմե Կարապետի Մարոնյանի «Հագուստի

մոդելավորման դասավանդման հիմունքները ազգային տարազի համատեքստում» թեմայով ատենախոսությունն ինքնուրույն գիտական աշխատանք է, ունի կարևոր գործնական նշանակություն, համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (կերպարվեստ)» մասնագիտական թվանիշին, հետևաբար ատենախոսին կարելի է շնորհել հայցվող մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Մանկավարժության և հոգեբանության

ամբիոնի վարիչ՝ / / մ.գ.թ., դոցենտ Լ.Գ. Բաղդասարյան

Արվեստի և սպորտի

ամբիոնի վարիչ՝ / /մ.գ.թ., դոցենտ Ա.Ա. Բարսեղյան

Լ. Բաղդասարյանի և Ա. Բարսեղյանի ստորագրությունները հաստատում եմ

ՎՊՀ-ի գիտքարտուղար,

մ.գ.թ., դոցենտ Ս.Ս. Բեժանյան